ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/05» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2022 թվականի ապրիլի 01-ին կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/05-3» պայմանագրում 2022 թվականի ապրիլի 29-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Վաճառողի առաջարկությամբ ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգվել է:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի «ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ում «ընդհանուր քանակը» սյունակում նշված՝ 283 հատ գրասենյակային աթոռից 153 հատ գրասենյակային աթոռի մատակարարման ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 և 8.8 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
01.04.2022թ. N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/05-3» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «29» ապրիլի 2022թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Ա. Հարությունյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և Մեգաօֆիս ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Այդինյանի (այսուհետ՝ Վաճառող), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 01.04.2022թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/05-3» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.8 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Պայմանագրի «ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ում «ընդհանուր քանակը» սյունակում նշված՝ 283 հատ գրասենյակային աթոռից 153 հատ գրասենյակային աթոռի մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011005841
ՀՀ ՖՆ գանձապետական վարչություն

Ղեկավար՝ Ա. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
Մեգաօֆիս ՍՊԸ
Հասցե՝ Փարաքար-Թայրով
Մայրաքաղաքային 200
ՀՎՀՀ՝ 01264917
Հ/Հ՝ 2050922061711001
Ինեկոբանկ ՓԲԸ

Տնօրեն՝ Ն. Այդինյան

/ստորագրություն/
Կ.Տ.